



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22263

15

394
<hr/>
2-51

1861

2010

2002

Printed in Turkey

ԹԱՐՎԻՉԵՑԻՈՑ ԱՆԷՄԻԱԹՈՒՂԹՅ

ՂԱՐԱԴԱՂՑԻՈՑ ՎՐԱՅ

18

Թարվիչեցւոց Անէմքաթուղթն գրած Ղարա-
գաղցւոց վրայ: Ղարագաղցւոց գրած պատասխա-
նը: Թարվիչեցւոց գրած օրհնէնքաթուղթն. Ղարա-
գաղցւոց շնորհակալութեան պատարագն եւ գոհու-
թեան յաւելուածը:

.....

Շնորհիւ 200 շարփառանոց (չափ գին-
ւոյ) կարասի, 14 թատանոց փաթակի (չափ),
օրհնութեամբ հարիւր յիսուէն տարեկան քա-
րով կրով շինած հնձանի. զօրութեամբ էջ-
միածնայ վեց Խալվարանոց Մարաղու սուրբ
բաղի, և օգնութեամբ գինւոյ մազայ Մու-
շու Սուլթանու սուրբ կարապետից եկած
տարեխի, ես՝ Թաղէոս Առաքելոյ բայրախ-
տար Տէր Սրապիոն աւագ քահանայ մայրա-
քաղաքիս Թարվիչու, որ օխտասան երկու
ու կէս տարեկան եմ, եռեսուն տարի է
օխնված եմ, կեանքումս Թարվիչէն ճշմարիտ
է՝ դուրս չեմ գնացած, եւ ոչ էլ վարպետի
մօտ կարդալն եւ գրելն եմ սովրած, բայց
ամենայն բանն՝ թէ երկնքումս լինի, քննած
եմ, թէ գետնի տակին, չափած եմ. գետնի
երես եղողները խօ՛ առանց այլևայլ գի-
տեմ, որովհետեւ 9 տարի վարպետութիւն

4057

1952


ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԱՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԱՅԱՆ

(գզիր) եմ արած, ու հիմի 30 տարի է մէյ-
խանաչութիւն (գինեպան) ամ անուս: 30
տարոն մին օր առանց գինի արաղ խմելոյ
չեմ մնացած, օրն որքան քիչմիչից շինած
գինի քուրդերին եմ ծախած, էնքան էլ խա-
ղողից քամած էն ես եմ վայելած, բայց իսկի
խելքս գլխիցս չեմ կորցրած, բաց ի էն օրե-
րէն երբ քառասունք եմ պահած, էն էլ մի-
նակութենէս էր պատահած:

Ոչ թէ միակ որդիս է քահանայ, տէր-
տէրակնկանս հէրն էր քահանայ, այլ եւ իմ
ի Քրիստոս հանգուցեալ հէրս, բարեյիշատակ
պապերս, պապական տասն պորտից քահա-
նայի ցեղից եմ եկած, նրանք էլ երեւելի
երեւելի իշխանների ազգից են ծնած եղած,
ինչպէս մօրս մէրն կը պատմէր:

Նրանց ամենի մէջն երկու աշխարհական
երեք էլ քահանայ են մինակ քուրդացած,
եւ ո՛չ աւելի: Նս ինքս քանի որ օխնված
եմ, երկու անգամ եմ գնացել քուրդանա-
լու, էն էլ՝ բարեպաշտ մէյխանաչէքոնց վե-
րայ էի բաւկացած ու սրբազան Առաջնոր-
դէն խռոված, թէ եւ ժողովրդիցս երեւելի
գինի արաղ ծախող իշխաններն եկած են
ինձ խնդրած, ղնամիշ արած, խրատած,
աղաչած ու յետ բերած:

Տասն անգամ իմ կեանքումս պաս եմ
կերած, ոչ գլխէ գլուխ, այլ ամեն մեծ պա-



27928-62

սին մին քանի շաբաթ է պատահած, էն էլ կամ հարիած եւ կողած, կամ քուրդերի տանն եւ պատահած. կամ թէ տանս ծածուկ եւ կերած :

Կեանքումս 27 անգամ եւ ժամարար եղած, 3 հարիած, 4 դամաղով (քէփով) մի քանիսն էլ զահվալթի նախաճաշիկ արած, մնացածն մուացած եւ ի՞նչպէս է պատահել :

Երկու հարիւր պսակ եւ արած, վաթսունն հեռի չհաս, քսանն մօտիկ ազգականն ազգականի հետ, ամէնն էլ յայտնի համարձակ, մնացածներն համար իսկի էլ չեւ հարցրած, ընտուր համար ծածուկ և թոնրի վրայ կամ օթախումս կամ պաղերի միջին եւ պսակած, խաչախալէրներն էլ քուրդ են եղած :

Սրանց ամենի ապաշխարէնքն ես եւ քաշած, ոչ թէ մեռել չեւ թաղած, այլ և գերեզմանի վրայ էլ չեւ գնացած, բայց տանն նստած արդիւնքս եւ ստացած, համ էլ ոչ ոքի չեւ խոստովանցրած, որ չըլնի թէ մինի մեղքն իմանամ, մին օր հետն տուչման դառնամ գնամ ուրիշներին յայտնեմ, ու հոգիս մարմինս դժոխքի փայլինի : Իսկ ուրիշի կնկանը եւ աղջկանը վատ մտքով չեւ նայած :

Ճշմարիտ է լաւ կարդալ չգիտեմ, եւ

լաւ ժամասացութիւն չունիմ, ամա ինչ
ժամակարգութիւն ու փոխեր գիտեմ, ամէնն
անգիր ջրի նման բլբլալով կասեմ ան-
ռանց կզկզալոյ :

Ամէն ժողովուրդն ինձ էնքան կը սիրեն ,
ինչպէս իրենց փորիցն դուրս եկած, էնտուր
համար էլ, էս օր ինձ վէքիլ են արած , որ
ես նրանց քացախած, թ-թուած, լեղիացած,
դառնացած , էրված , խորված սրտէն բըղ-
խած անէծքն ու հայհոյանքներն գրով գրել
տամ ուղարկեմ հասցնեմ անիծած Ղարա-
դաղցւոցն որ էս քաղաքումն երախայու-
թենից մեր աչքազխանէքանց ամանլըվայ
ջրերովն գլխերնին պահեցին : Մեր հին հին
պատուտած շորերն հագան , անկրուն անե-
րես սօլերովն (կօշիկ) ման եկան , յետոյ
դուրս գնացին մին մին դազբիով (սեւ փող)
փող հաւաքեցին , հարստութիւն ժողովե-
ցին , մալի , հալի , տան եւ տեղի , կնկայ
որդւոյ տէր դառան , մեր հացը մեր բեր-
նիցը խլեցին , մարդի կարգ շարք ընկան
հերիք չէր , սկսեցին քուրդերի մէջն ան-
դուռն բերանով մեր գինւոյ վատութիւնն
ասել , թէ թարվիղեցի Հայերն քիշմիշիցն
գինի են քաշում ու ձեզ ծախում եմ :

Ես էլ որքան էս անիծած Ղարադաղ-
ցւոցն խնդրեցի , խրատեցի , աղաչեցի թէ
էտով են մեր թարվիղեցիք , քահանայք ,

խանք, իշի-խանք, արհեստաւորք, աղքատք, հարուստք, որբեւարիք, մեծ պատիկ իւրեանց գլուխն պահում, լաւ չէ՛ մի՛ խօսաք, լեզվըններնիդ ձեզ քաշէք, չելաւ . ջուզեցին իմ խօսքիս ականջ դնել, էստուր համար ես էլ էս օր նաշտով, ո՛չ արաղ ո՛չ գինի խմած, բերանս բաց արի, աչքերս խփեցի, պետ պետ լաւ լաւ անիծեցի . նզովքի տակ քցեցի Ղարադաղցւոց օրականէն ինչքրի խարուր տարեկանը, գետնի տակ գօռպագօռները . կնանքոց փորումն եղած էգն ու որձը, մեծըն ու պատիկը, տէրտէրները սարկաւազները, մոնթերը, փոխ ասողները, ժամակոչները, մէլիքները, քեօխէքը, տանուտէրները, երկրագործները, գզիրները, ջաղացպանները, ջէհլիները, կնանիքը, հարսնացուքը, տան աղջիկները . Թարվիզումն, ուրիշ երկրումն եղած սաղերն ու սատկածները, ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցայսօր խատածներն, էսօրվանից մինչ աշխարհի վերջը Ղարադաղցիքն նզովեա՛լ լինին :

Ա՛խ, Թարվիզեցի եղբարք, ջերմեւանդ սրտով երեք երեք անգամ ասացէք
Ամէն, Ամէն, Ամէն :

Ա՛խ Ղարադաղցիք, ա՛խ Ղարադաղցիք, դուք մեզ բիէհտիբար արիք, գլխերնիդ շատ մեծ մեծ քարերովն տուիք . Աստուած ձեր ոչինչն ոչինչ անի, ինչն էլ ոչինչ, ո՛չ ձեր

որդիքն ո՛չ դուք մարդոյ շարք շխառնուիք :
Թաղէոս Առաքելոյ աջն համբուրելոյ ար-
ժանի չլինիք . էնպէս գժվիք , յիմարանաք ,
որ ոչինչ չի հասկանաք . ձեր երեխէքն քաղ-
ցած ծօրաւ զկռտան , տկլոր ու բորիկ ձը-
մեռն շան նման վնկվնկան , ձեր կնանիքն
ու աղջկերքը հարիր (ապրշում) փարչի ե-
րես չտեսնան . Ազատ խանի նման մարդոյ
ձեռքն գերի գնան . դուք էլ Չալարիանցւոյ
ձեռի տակին խաչվիք , չարչարվիք , տան-
ջուիք , ձեր եղունս տապակվիք .

ասացէ՛ք Ամէ՛ն :

Ա՛խ Արադադցիք , ա՛խ Արադադցիք ,
ինչպէս դուք մեր կարասների անուռնն կոտ-
րեցիք , դուք էլ կարասումն գինւոյ նայելոյ
արժանի չլինէք . կատիկներդ թրջելու գինի
չգտնէք . ձեր երեսը առաջի Աստուծոյ լինի
սեւ , հողին սատանայ դեւ . ոչինչ մարդոց
չստանաք ողջոյն բարեւ . ձեզ խռով կենայ
սուրբ Տաթեւ . էս կեանքումն մնաք ա-
ռանց լուսին ու արեւ . չկարողանաք նայիլ
վերեւ , գլխերնուդ թափի կրակն իբրեւ ի
Սողոմ գոմոր եղեւ .

ասացէ՛ք, Ամէ՛ն :

Ա՛խ Արադադցիք , ա՛խ Արադադցիք ,
թէ եւ մեզ վրայ վատ խօսացիք , բայց ձեր
անուռնն մեզ մօտ էլ , սատանի մօտ էլ կոտ-
րեցիք , համ էլ սեւերէս մնացիք . միշտ սա-

րերի միջին կենաք ինչպէս կաք . քաղաքի
երես չ'տեսնաք , ձեր գիլասը չհասած ու-
տէք . զկեռն ու մամասուրն ձեր ջանը քցի .
քոսն ու քորն կաղինն ու տկողինն ըլնի ձեր
կերակուրն . մորիով մոշով կշտանայ ձեր փո-
րըն . չորանայ մեր Աջու գետի նման ձեր
գետերն ու աղբիւրներն . մկներն ուտեն
ձեր ալուրն . թՓանկներնիդ , թափանչէք-
նիդ թրջի անձրեւի ջուրն . փէտ դառնայ
ձեր սուրն ու թուրն . կուրանայ ձեր կոյրն .
երեսնուդ քսեմ մեր սեւն ու մուրն . խողի
կաշիցն կարէք ձեր երեխանց շորն , առջի
նման ձեր բնակութիւնն լինի սարն , փոսն
ու ձորն , ասացէ՛ք ա՛մէն :

Ա՛խ Աարադաղցի՛ք , ա՛խ Աարադաղցիք ,
ինչ որ իմ մեղաւոր բերանէն , երված խոր-
ված սրտէն դուրս գայ . մինին խաղար ,
խարուր խաղար գայ հասնի ինչպէս կէծակ
ձեզ վերայ , որովհետեւ քանի ամիս այ
ձեր խօսքովն մեր գինու անուենն կոտորվել
այ , էլ չի ծախվում , մնում այ , էստուր խա-
մար խնդրում եմ ջերմեռանդ սրտովս , որ
քանդվի ձեր տեղն ու տունը , ամէն խո-
ղարունը , ոռնայ ձեր շունը , քաղցրանայ
ձեր տափայ եւ թթու հունը , տասներմէկին
ասէք տասներմուսը , ձմեռն դառնայ ձեր
ամառն ու գարունը , գլխէրնուդ թափուի
ձունը , ասացէ՛ք ամէ՛ն :

Ձեր ժամերումն մրթմրթան կղկնձան ,
կղկղան տէրտէրներն , ճոճոան , կռկնջան
ձեր սարկաւազներն , մզմզան , վզվզան ,
հավհավեն ձեր տիրացուներն , մակմական ,
կռկռան ձեր մոնթերը • ձեր մեռելները մը-
նան անպատանք ու անթաղ , ժամերնիդ
անձաղ • մատաղնիդ անաղ , ժամի մոմերն
անվարաղ • չայիր չիմաննիդ անցող եւ ան-
չաղ , ջեհիլներն անեարաղ • դամաղներնիդ
չըլնի չաղ , մէջլիսներնիդ մնայ անտաղ , ա-
լուր ունենաք՝ բայց ոչ մաղ , տնէրնիդ՝ անօ-
ձաղ • կերակուրնիդ ուտէք սառն ու պաղ •
ձիերնիդ , կովերնիդ , եղերնիդ՝ երեք ոտ-
նանի ու կաղ , դործքերնիդ ամէն վախտ
դնայ ձախ • ում որ ծառայէք՝ մնաք ան-
հախ • սրտերնուցդ չպակասի ահն , դողն
ու վախը • սասցէք ամէն :

Ա՛խ Ղարադաղցի՛ք , ա՛խ Ղարադաղ-
ցի՛ք • մեզ ու մեր սիրան դուք էրէցիք ,
տրորեցիք , խորովեցիք , մեր լաւութեանց
տեղն պատիժ ստանաք • Յուդայ մատնիչ
դառնաք , ձեր սկիհը մնայ անբաժակ , դուք
էլ անժամ ու անպատարազ , վանքերնիդ՝
անզանդակ , ժամերնիդ՝ անտախտակ , հարս
ու փեսէն՝ անթաղ ու անպսակ , տղամար-
դիկն՝ անդտակ , կնանիքն՝ անլաչակ , ձեր
կովերն դառնան ալապստրակ , էծէրն ու
ոչխարներն պղտիկանան ինչպէս մոծակ ,

որք ոչ կաթն տան , ոչ մածուռն ոչ կարագ ,
ձեր խօխէքն էլ մնան նրանց հասրաթ ա-
մէն ժամանակ , ասացէք ամէն :

Ձեր վարուցանն ուտի մորեխն , քո-
ստովի վեր թափի ձեր թօփ թօփ միրուքն
ու բեխն , աչքով չտեսնիք գինու մազայ
տառեխն , ոտնամաններնիդ ըլնի միշտ տը-
ռեխն , չհասնի ձեր բոստանի ձմերուկն ու
սեխն , աւերվի քանդուի ձեր տունն ու
տեղն , գըծվիք , խելադարուիք , չգտնէք
նրանց դեղն , հաստանայ , գերան դառնայ
ձեր աչքի ծեղն , սուրբ անէծքս նզովէ ա-
մենիդ ցեղն , որ էլ մեզ վերայ չդնէք ձեր
մեղն , թուր թփանկի տեղն , բանացնէք
նեւտ ու անեղն . ասացէ՛ք ամէն :

Ղարագաղ ցիք ժողովեցան , իւրեանց մէջն խոր-
հուրդ արին՝ գտան մին տիրացու գրոց տեղակ . որ
ինչպէս փիլիսոփայ մտածեց՝ մտածեց , գրին վեր ա-
ռաւ՝ էս պատասխանը գրեց թարվիղեցւոյ :

Բարձրագագաթ իբրեւ Արարատ , երկ-
նասլաց ինչպէս Արագած , վեհաճեմ որպէս
սուրբն Եփրեմ , գինեճան , արաղաճան ,
քացախաճան Տէր Արապիոն , Տէր Սիսօն ,
Տէր Անտօն եւ Տէր Ահարոն քահանայիցդ ,
գեաղութիւնով մարդ դառած , եկեղե-
ցումն նզոված , սերմնացած , չարահամ-

բաւած Պարոն Վասակ Խանիդ , գինեծախ
արաղածախ , իշխ-խաններուդ թարվիզու
մեծիդ եւ պատիկիդ , մեր անտառախիտ ,
մացառախիտ , Սեւ քարի գիւղորէից մէջն
բնակող սրբափայլ Տէրտէրնէրից , անսօրուս
ժողովրդից , սպիտակամօրուս մէլիքներից ,
սեւամօրուս քեօխենէրից , պառաւնէրից եւ
երիտասարդից , ի կենդանեաց եւ ի Քրիս-
տոս հանգուցելոց . երկնաչու , խորանա-
զարդ , նամորակերտ օրհնութիւն գայ հա-
սանի ձեր թարվիզու մեռնած պատկեր-
նէրին , Քրիստոսած մասուենքներին , սրբ-
բած վանքերնուդ , մարգարէօծ անապատ-
ներուդ , մարտիրօսած եկեղեցիներուդ եւ
եւ ժամերուդ , նոցա միջի խաչվառնէրին ,
չուրջառնէրին , փիլոններին , ջահէրին , մո-
մերին , մոմակալնէրին , հողաթափներին ,
բուրվառնէրին , քչոցներին , ձեր տնէրի պա-
տէրին եւ բերդի պարսպին , փողոցներուն
եւ շուկաներուն , տան եւ տեղին . մառան-
ներուն , կարասներուն— արաղի փաթակ-
ներուն , խալիչէքանց , կարպէտներուն եւ
հասիրներուն . թոնիրներին եւ օջախներին ,
փէտին , ցախին , գեավանին (փուշ) քակո-
րին (կտտոր) , սէչմին եւ ամէն վառելիքին ,
խմորին , տխտըմորին , տաշտին եւ վարդա-
նին , դալեանին եւ չիպուխին , թութունին
ու թամբաքույին , չվալնէրին եւ պարկէրին ,

նոցա միջի ցորէնին , կորէկին , ալուրին ,
լօբուն , բակլին , մաշին , լափին , ձափարին ,
ղազաննէրին ու կճուճին , աղին , փլփլին ,
քուրսիքանցն եւ նոցա վերայ փոռցնէրին ,
մաղալին եւ կրակ քրքրոցին , ասացէ՛ք ան-
մէն :

Գարձեալ նաեւ , այլեւ , Պարոն Թար-
վիզեցիք , ձեր սրբազան պատուական մա-
տանց դրած նզովող՝ անիծծօղ՝ կոնդակն ցե-
ցակեր . բորբոսնած . թթուած սրտէն բըղ-
խած ձեպով . շուտով . փութով եկաւ մեզ
հասաւ . մեք էլ հոգեխառն մտերմութեամբ ,
անթերի սիրով կարդացինք . իմացանք եւ ի
միտ առինք . վասն որոյ , սրայ աղազաւ
պարտաւորեցանք պատասխան տալ անդգա-
մին ոչ ըստ անդգամութեան իւրում որպէս
գրէ հանձարափայլ , բարձրաստիճան , արե-
գականափայլ իմաստունն . որովհետեւ դուք
մեր երկնաքաղաքացիքն էք . մեր իշխի-խան-
ներն էք . մեր բերանի շունն էք . մեր գըլ-
խի տէրն էք . մեր ականջի եղն էք . մեր կը-
ռան տակի մագէրն էք , մատնէրի մէջի կեղ-
տըն էք , մենք ձեզ պէտք է պատուենք՝
մեծարենք էնպէս՝ ինչպէս մեր փորիցն դուրս
եկածն , յարգենք , փշի փշի , քուսի քուսի
քուշի քուշի անենք , ներբողենք , գովենք
լուսաբանենք ամեն տեղ , ամեն հեղ , դուք
լսօ՛ հստոնք ամէնքն գիտէք . ուրեմն ինչի՞

ձեր պայծառափայլութիւնն , այլակերպու-
թիւնն , դերասանութիւնն , բարձրաս-
տիճանութիւնն անմեղ անտեղ մին քանի
ջահիլ ջուհուլի , տուհաչ վայրահաչ խօսքե-
րիցն մեզ վերայ նեղացած , դժգոհած ,
բարկանալով , բամբասելով , պղտորվելով ,
դառնանալով , լեղիանալով ու աղիանալով
վեր էք առել ձեր գլխին , ձեր մեծին , ձեր
պսակին , ձեր խելքին լայեղ էնպէս կոնդա-
կագիր էք եղած ու մեզ անէծքի տակ քը-
ցած :

Յայտնի է որ մենք առանց ձեզ ոչինչ
ենք , ինչպէս առանց շիրի շենչն , առանց
երեսի պինչն , այբուբենն առանց եջն , թուղթ
ու թանաքն առանց գրիչն , չաքուչն առանց
ոսկերիչն , ոսկերիչն անչաքուչն . ձեր լա-
ւութիւնն մոռացող չենք , թէ ձեր սրբա-
գործ ոսկերիչներն մեզ համար մասնատուփ ,
խաչ , սկիհ , բուրվառ , ձեր ապտուածահայր
Յովսէփի հայրապետի աշակերտ նաջառներն
(դուլգար) մեր ժամերի համար սեղան ,
դուռն չչինեն , եւ դուք իշի-խանքդ մեզ
գինի չածէք , ձեր դերձիկներն մեր քահա-
նայից համար շուրջառ , փիլոն , փարաջի
չկարեն , մեր ճարն հնարն ի՞նչ է , ո՞ւմն
պէտք է խնդրենք : Էս մեր ակընկալու-
թիւններին նայելով պէտք էր խնայել էիք
ու մեզ անէծքի տակ չձգէիք , թէ ինչ է՝ մին

քանի մեր Սեւ քարեցիքն, ձեր քիչմիչի քա-
մած գինւոյ անուէն կոտորել են, որպէս թէ
մահկանացու մեզք են արել: Գուք էլ կա-
րող էիք նրանց վատութիւնն, գոռոզու-
թիւնն, յանդգնութիւնն, ապերախտու-
թիւնն եւ այլ ուրիշ մեղքերն եւ յանցանք-
ներն բամբասէիք կամ պրախօսութիւնն,
չատախօսութիւնն եւ ստախօսութիւնն սուտ
էիք հանել, հրատարակել. քուրդէրի մէջն
աւելի գերազանց եւ բարձրազանց, բարձ-
րագոչ աղաղակաւ. եւ ոչ թէ մեր ոտիցն
բռնել եւ խածնել եւ կամ թէ կամե-
նալ ինչպէս ծաղկակոխ մեզ մաքրազարդել՝
մեր թափանըն հանել պատառել ուտել, ի
հարկ է մեք էլ ինչպէս մոխրաթաւալն պար-
տական էինք այժմ եւ այսօր, վաղն և միւս
օրն որքան զօրութիւն կարողութիւն ունինք
մեր յետի ոտովն ձեր գունչը պռունկը ջար-
դել, խորտակել եւ ատամնիդ փշրել եւ
մանրել:

Ի վերջոյ՝ այս եւս ծանուցումն լինի եւ
զեկուցումն, որ թէեւ մեզ վերաբերելի չէ
էս կռիւն եւ մեր պարտքն չէր ասելն, բայց
տեղն է եկել. լռենք, կասէք ի՞նչ ամենա-
աւանակ մարդիկ են, այսինքն շնորհակալ,
երախտապարտ եւ գոհ չէք, մի՞թէ որ մեր
ամենագովելի Սեւ քարեցիքն միայն ձեր
գինւոյ անուէն են կոտորել քուրդէրի մօտ եւ

չեն ասել, թէ Թարվիզեցւոց մարդիկն փո-
ղոցի միջին՝ դուքանումն նստած՝ քուրդէ-
րին արաղ են ծախում, եւ կնանիքն էլ ձեռ-
ներուն հինայ դրած տնէրումն խմիչք են
խմացնում. խորտիկածաշակ, ախորժածա-
շակ մաղէքն իւրեանց ձեռքով են թավաղայ
անում քուրդերին. կամ ձեր երախէքն որքան
ջէհիլ են, գինի արաղ են տանում փէշի տակի
քուրդերուն տուն, երբ մեծանում են՝
ղամայ են կապում՝ լոթի դառնում, հէնց
ծերանում են՝ տների դռանն մէյխանաչու-
թիւն են անում. որիցն Աստուած հեռի ա-
րասցէ մեր երկրացի Սեւ քարեցւոց թէ՛ էդ-
տեղ, թէ՛ էստեղ, թէ՛ դժօխքում, ասա-
ցէ՛ք ամէն :

Ասենք մեր ջէհիլներն չեն իմացել ձեզ
վատութիւն անելոյ կերպն, սկսել են է-
տուանք խօսալ : Աւելի վատ չէ՞ր, մեր մէջն
ծածուկ ասեմք, թէ ձեզ համար ասած էին
եղած, Թարվիզեցիք աղջիկ են տալիս ան-
պըսակ Տռանդնէրին. կամ Թարվիզու խա-
նումներ ասածների շատն նրանցից են, որք
Տռանդնէրի մեռնելուց կամ իւրեանց եր-
կիրն վերադառնալուց յետն են Թարվիզեցի
գինէծախ իշի-խանէրին գնացած. մի՞թէ
ձեր երեխեքանց շատն գիտե՞ն իւրեանց իս-
կական հօր անունն-քա՛ւ լիցի. ո՞ր կանանց
ղօնաղլրղութեանց մէջն չեն տեսել էսպէսնե .

րիցն խանութ դառած՝ շարված՝ նստած լինին ամէնի գլխին : Ո՞վ չգիտէ , որ ձեր տէրտէրներն հարստացած քուչեքումն կը շրջեն եւ գիշեր ցորեկ անպսակ կնանքոց հետն ծուռնկն ծնկան կպցրած՝ կը նստին , կուտեն կը խքմեն : Չէ՞ք արդ եօք ամաչում էս պակասութեանց տէր ըլնելով , ուզում էք ուրիշներին էլ ոչինչ տեղն բամբասել : Ասենք մարդ ամաչում է ձեր երեսին ասելն էստոնք , ինչի՞ դուք ձեր արարմունքէն չպէտք է ամաչէք :

Մենք ձեզ խօսմ մուդդայի (թշնամի) չենք եւ չենք էլ ուզում ձեր մեծ մեծ պակասութիւնները ասել կամ գրել , խնայելով էն երեք ու կէս օջախներին , որ ձեր մէջն ողորմելիքն իւրեանց հայէն , պատիւն , արուսն պահում են . ապա թէ ո՛չ շուռ կը կը գանք , ձեր հազար ու մէկ պակասութիւններն մէկ մէկ կը գրենք , կը խայտառակենք . ուրեմն լաւ կանէք փօշմանիք շան նման եւ անմեղայ չը մնաք Յուդայի նման . որպէս զի էլի միմեանց հետ ինչ պատուով ցայսօր , ցայս րոպէն , այսուհետեւ էլ էնպէս կառավարվինք : Խելք ունիք՝ էն անէծքի նզովքի տակիցն հանեցէք մեզ եւ շուտով գրով գրեցէք , դրկեցէք եւ համոզեցէք մեզ ի խաղաղութիւն անեղրական . ապա թէ ո՛չ , երդվում ենք Աստուած , եր-

կինք, սատանայ, հրեշտակ, սար, քար, սեւ,
սպիտակ, էնպէս կանենք ձեզ, աշխարհումս
մի մատն մեղր դառնաք • դժոխքումն տեղ
չունենաք, երկնքումն սանդարամետակա-
նաց երանի տաք • Յուդայի, Վասակի,
Շիմրի եւ Եզդի վերայ շատ նահլաթ լըսէք
ու տարտարոսի հրոյն կերակուր դառնաք,
յաւիտեանս յաւիտենից • ամէն :

ԹԱՐՎԻՋԵՑԻՈՅ ԳՐԱՄ ՕՐՀՆԵՆԵՐԱ-
ԹՈՒՂԹՆ

ՂԱՐԱԴԱՂՑԻՈՅ ՎՐԱՅ


Յիսուսի Քրիստոսի Խաչափայտն ի Գող-
գոթայ տանողի ցեղիցն իջած, Թաղէոս ա-
ռաքելոյ համար կօշիկ կարողիցն սերած,
սուրբ Տաթեւի վանքի դավադանակիր, սուրբ
Բարդուղիմէոս առաքելոյ վանքի զանգակ
զարնօղ՝ Գրիգոր լուսաւորչի մեռոն բաժա-
նօղ՝ Տէր Սրապիոն աւագ քահանայ եւ Տէր-
տէրակին Տիկին Բրաբիոն Խաթուն խանութ,
եւ Թարվղու բողոք բնակիչք սուրբ Հայոց
լուսաթաթախ հաւատքն դաւանօղք • ծերք
եւ երիտասարդք, աղքատք եւ հարուստք,
Խանք ու թանք, պառաւ կնանիք • հարսներ
սկեսուրներ • աղճիկներ • ծծից կտրած եւ

ծիծ ուտող • մօրերնու փորու մն եղած եւ
 դուրս եկած երեխայք • օրհնութեան կոն-
 դակս լիքն սրտով, խալվարով, դանթարով •
 ջանախանով, խարարով • չվալով • տօպրա-
 կով • քիսով, ջիբով, բըռնով, Ովկիանոսի
 եւ Որմիոյ ծովով ուղարկում ենք դայ հաս-
 նի Ղարադաղու Սեւ քարերու գիւղօրէից
 բնակիչ Հայերիդ վերայ ամէն տարի, ա-
 մէն շաբաթ • ամէն օր • ամէն սահաթ • ա-
 մէն դադիղայ • ասացէք ամէն :

Երանեալ Ղարադաղցիք, ձեր գովա-
 սանքն գրելոյ համար, որքան աշխարքումն
 թանակ՝ թուղթ կայ, բաւական չէ՛ • ո՛չ մի
 մարդածին լեզու չէ կարող եղած՝ Նոյայ
 սուրբ ագռաւի երկիրս իջանելոյ օրիցն մին-
 չեւ ցայսօր, ձեր պապի, պապի պապերի
 գովասանքն կատարեալ ասել ու գրել : Ձեր
 գեղերն • անտառներն • սարերն • բաղերն •
 բախչէքն • գառնէրն • հորթէրն • ոչխար-
 ներն • էծէրն • մադեանէրն • քուռակներն ջ
 աւանակներն • օրհնած ու գոված են • ու-
 րեմն մեր բերանիցն դուրս եկած քաղցր
 խօսքերն ձեզ համար քիչ են :

Իսկ խելօք էք դրախտի օձիցն, իմաս-
 տուն՝ Բահաղամի աւանակապետիցն • գի-
 տուն էք Փարաւոնի աստղաբաշխներիցն •
 Սողոմոն իմաստունի ծիրան էք կերած •
 զօրեղ էք ինչպէս մարդարէն Գողիաթ,

27 57 27810-62



շատուր էք Յգիստոսի գորտերիցն , միա-
բան էք ինչպէս մորէիս , հեզ եւ խոնարհ էք
ինչպէս Քրիստոսի հեծեալն . վազկան էք
քան զամէն կենդանի . ետքի ոտքով ականջ
քորող էք : Երնե՛կ , հազար երնէկ ձեզ .
Ղարադաղն դրախտ է . եւ դուք էլ նորա
միջի ծաղիկներն , պտուղներն , Գաբրիէլ ,
Ռափայել եւ Միքայել հրեշտակներն : Ծիծ
ուտող երեխեքանց նման անմեղ էք , Քրիս-
տոսի դառան նման միամիտ . աշրդների նը-
ման լեզուով ճարտար . օրբէվերի կանանց
նման ճգնաւոր էք , գինու արաղի նման
հարսեցնող . եզան նման վաստակաւոր ,
միջմի նման աշխատաւոր :

Օրհնած Ղարադաղցի՛ք , երկնաքաղա-
քացիք . երանի է ձեզ որ աշխարհումս բա-
րի անուն ունիք . ոչ ոքի վերայ սուտ խօ-
սացող չէք . եւ բամբասանք էլ չէք անել .
ձեզ նման ոչ նախորումս եւ մուրումնս կայ .
ամէն մինգ մին մին լուսատու արեգակն
էք . երկնից մուտրակն էք . պոչաւոր աստղն
էք . ծիածան աղեղն էք . ի սկզբանէ
մինչեւ ցայսօր բամբասանած չէք . ձեր երե-
սին սեւ մուր չէ քավել . ձեր անուանը
կեղտ չէ կպչել . ձեր ոտքին քար չէ դաշել .
ինչպէս կատու ձեր մէջքին վերայ չէք ընկ-
նիլ . ասացէք ամէն .

Ղամբարափայլ , լուսափայլ Ղարադաղ-

ցիք . դուք մեր աչքի լոյսն էք . մեր թագն
եւ պսակն էք . մեր լաւ դօնաղն էք , էնպէս
դօշաղ էք , որ դուչն ծառի վերայ նստած ,
առջն քնած , աղուէսն՝ կանգնած , ալա-
պըստրակն՝ չզարթնած , գէլն՝ բնումն պար-
կած , թՊանկով կը խփէք . ձեր թՊանկն
փուլատ է . թուրն երկաթ , եարաղն ոսկ-
ւոյ զւթ , վո՞վ ձեր վերայ յօրէս ետնէն
խօսայ , վատ սառուցով գինւոյ մնայ ձմեռն
հասրաթ , ասացէք ամէն :

Քիչմիչի խաղողի մաքուր անապական շի-
րիցն միշտ լրքցրած կարասի . սուրբ Պան-
դալէոնի վակասի , որ թաղած է ի լեառն
Ամարասի . սուրբ Հռիփսիմէ կուսի հազած
կերպասի , Անտօն ճգնաւորի հազած խա-
րազի , օձագաւաղանի Մովսէսի , սրբոյն
Դաւթի սաղմոսի , զանգազատանց սրբոյն
Թադդէոսի և Բարդուղիմէոսի , նախավկայի
Ստեփաննոսի , օրհնութիւնն եւ շնորհն դայ
հասնի ձեզ վրայ , ո՞վ Ղարադաղցիք , ասա-
ցէ՛ք դուք ամէ՛ն :

Ղարադաղցիք երբ ստացան օրհնութեան կոն-
դակն , ժողովեցան , պատարագ արին , գոհութեան
մէջն յիշել տուին ժամարարին՝ Թարվիղեցւոց երե-
ւելեաց անուներն՝ այսպէս .

Ն՛ւս առաւել . . . մեր Թարվիղու մայ-
րաքաղաքացի Աւագ քահանայ Տէր Սրապիո-

նին , տէրտէրակին Բրաբիոնին , նորա որդի
տէր Սիմոնին , տէրտէրակին Տիրուհին , տէր
նորընծայ Անտոնին , տէրտէրակին Մեռո-
նին , սպիտակամորուս տէր Ահարոնին , տէր-
տէրակին Նազանին , սոցա մեծին եւ փոք-
րին , սաղին եւ մեռածին , հեռու մօտիկին ,
զՏէր աղաչեսցուք :

Վասն Թավրիզու Խան Վասակին , նորա
հայր փաբեար Գասպարին , կողակից Մա-
նուչակին , միւս որդի Խաչիկին , Մանու-
կին , սիրունիկ Շաքար հարանիկին , մեծ
տանտիկին ու պապիկին , Հանիկին ու Սա-
նիկին , դուստր Շողակաթին , Գիւլնարա-
թին , Եղսաբեթին , դուլգար եզնայ Հաս-
րաթին , հաստափոր Էյնաթին , երեք ան-
գամ թուրքացած Բինեաթին , Խալ օղլի Մա-
րութին , Կուճունց Յարութին , համ հեռու
համ մօտիկին , զՏէր աղաչեսցուք :

Վասն իշի-խանաց Թավրիզու խաղող
կոխըռճող Ղարախանին , արաղ քաշող Օր-
տուխանին , Ղոււմարբաղ Իսայ խանին , Լախ
լուխ Բաբա խանին , Բալաք Աղատ խանին ,
Համամշի Օհանին , աղգապետ Ճըռօյին , աղ-
գասէր Խէչօյին , Աստուածապաշտ Քօչօյին ,
խելօք Փանօյին , մօրաքոյր Բանաֆչայ խա-
նումին , Բաջի Բէհանին , զՏէր աղաչես-
ցուք :

Վասն երեւելեաց Թավրիզու Դիւլգեար

Խայրապետին եւ մեծաքիթ Նահապետին ,
տկճոր շինող Մաթոս աղին , կարաս կոծկող
Շահբուդաղին , Կրետէնց Սարգիս աղին ,
մէյխանաչի Սառ Փաղին , խօրուղբաղ Սուք-
եաղին , նորա քոյր Ալմասին , կաղ Հերիբ-
նաղին , խալայ Շահնաղին , ղօչբաղ պարոն
Եարամաղին , նորա քոյր Շովշով Գիւլնաղին ,
հա՛մ խօջա հա՛մ աղա Մալխաղին , նորա
դուստր Նարգիզին , մեռել լուացող՝ գե-
րեզման փորող Նազարին , Քեասպարին ,
եզնայ Ղազարին , սաղկայ Մանկասարին ,
դայիջան Յակոբ աղբարին , զՏէր աղաչես-
ցուք :

Վասն Թավրիզու բարեպաշտ խանու-
ներին , անպսակ Խանուս խանումին , Խա-
սայ Նազլու խանին , մարդիցը փախած Նէնէ
խանումին , շուտ շուտ ժամիցն խռովող
Զանգանին , տակը շրուող Մարիանին , լաւ
արաղ ծախող Համդամին ու Խօշղաղամին ,
պասակեր Անթառամին , հարսիան Թամա-
մին , հաստոռանի Նաբաթին , շօլաղ Գայ-
եանին , մարդուն ծեծող Խօռօմին , ծծմէր
Սանամին , ողորմաթաս խմօղ Շուշանին , ա-
մենուն սիրական Թանթանին , խալայ Շահ-
սանամին , որբվերի Շամամին ու Շօրշօրին ,
զՏէր աղաչեսցուք :

Վասն թուրքացած խօջա Մանուշարին ,
Գուլգարէնց Վառվառին , նորա քուր Հու-

րիին , Սընըղչի Սառին , Դալարէնց Գիւլամբարին , պոչաւոր Աբգարին , Ֆահլարաշի Քօշարին , Ազբազբաշի Ղամբարին , գող Չաքարին , ժամասաց Ենգիբարին , հա՛մ առաջից հա՛մ յետնից քացի տուող Գիւլնազին , Տիտիզ Նարգիզին , գՏէր աղաչեսցուք :

Վասն երեւելեաց Թավրիզու , որոց հօրերու անուէն յայտնի չէ . պարոն Թուրաբին , աղայ Գուլնաբին , տիրացու Ղարիբին , պասակեր Մաթոսին , արդար Թադոսին , զընջընջան Փանոսին , վարդապետեան Ղուկասին , Չուսրութենց Պօղօսին , Հռիփսիմէնց Պետրոսին , հաց թխող Բանաֆշի որդի Սարգիսին , օխլաւ քաշող Լէյլու որդի Թորոսին . գՏէր աղաչեսցուք :

Վասն Թավրիզումն հանգուցելոցն մահտեսի Մուրատ հասըլին , տէրտէրացու Չամալին , պարոն Քամալին , աղայ Իսրայելին , մայրատես քեռի Հալալին , խօջա եւ բէկ երկար Գալօյին , ըստ որում Դանիէլին , Հայրումէնց Քաղցրընկալին , խանացու խօջա Լալին , միրզայ Բաբալին , Աստուած տայ սրանց հոգիքն լոյս դառնան եւ արքայութեան մէջն արդարանան . գՏէր աղաչեսցուք :

Վասն ճանապարհորդաց , օտար երկրումն բնակելոց , հաւատի համար տան մէջն

նահատակելոց , թլփատելոց , թուրքացելոց
վերստին քրիստոնէացելոց , դերեզմանատան
մէջն թաղվելոց , նաւումն , ձնումն , դե-
տումն , քամումն , չուանով , գինւով , արա-
ղով խեղդվողաց , գելէրի , շների , առջերի
կերակուր եղողաց , մեռնելիս մեղայ չասո-
ղաց , խոստովանողաց եւ ապաշխարողաց ,
քնջնումն՝ պուճախումն մնացողաց , պասկե-
րողաց , ազգին մատնողաց • զՏէր աղաչեա-
ցուք :

Գ . ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Գրեալ էի ի Թարվիզ 1861 ամի .



1801

0

— 52 —

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

<p>394</p> <hr/> <p>15-2</p>

2013

22263

